ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԵԼՈՒՅԹԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 12-13-ը Վիրահայոց թեմում հյուրընկալվեց Վանաձորի Սուրբ Նարեկացի եկեղեցու երգչախումբը: Այցելությունն իրականացվել էր վանաձորցի բարերար, Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր Արմեն Մխոյանի հովանավորությամբ և Վիրահայոց թեմից՝ Սամվել Աղեկյանի աջակցությամբ:

Թբիլիսիի հայոց Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում Տերունական աղոթքից հետո Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը ողջունեց երգչախմբի անդամներին և եկեղեցում հավաքված վիրահայ հավատավորներին ներկայացրեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին: Վազգեն Սրբազանը կարևորելով այս երգչախմբի ելույթը վիրահայ հնամենի տաճարում՝ ասաց, որ վերջինիս հնչեցրած հոգեպարար երաժշտությունն առավել կոգեշնչի ներկաներին ու առավել կամրապնդի հավատն ու ազգային ինքնագիտակցությունը նրանց հոգիներում: Խոսելով երգչախմբի գործունեությունից, Սեպուհ Սրբազանը ասաց, որ, իր կազմում ընդգրկելով մեծավ մասամբ մանկավարժների, 16-ամյա գործունեության ընթացքում, երգչախումբը ճշմարտորեն ծառայել ու ծառայում է ստանձնած պատասխանատու և աստվածահաճո առաքելությանը:

Թեմակալ առաջնորդների խոսքին հաջորդեց երգչախմբի ելույթը, այդ թվում՝ Կոմիտաս ու շարականներ, նաև՝ կատարումներ Սայաթ-Նովայից: Համերգը, որն իր բնույթով անդրանիկն էր վիրահայոց եկեղեցում, մեծ արձագանք գտավ ներկաների շրջանում՝ առաջ բերելով թեմերի միջև հոգևոր-մշակութային կապն առավել աշխուժացնելու ծաղկուն գաղափարներ ու մտահղացումներ: Այդ օրը եկեղեցում հավաքված վիրահայ մտավորականության թվում էին Վրաստանի խորհրդարանի անդամ Վան Բայբուրթյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության մշակույթի գծով խորհրդական Եղիա Մանսուրյանը:

Հաջորդ օրը Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցում Պատարագ մատուցեց Տ. Վահան քահանա Ազարյանը:

Հյուրընկալության օրերին ուխտավորները բարձրացան Հայ գրողների ու հասարակական գործիչների Պանթեոն, ուր Մեծաց շիրիմների մոտ հնչեցրեցին Մ. Եկմալյան, Ջիվանի... Նրանք եղան նաև «Գարի Դավթյանի տուն» տիկնիկային թատրոնում, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում: Ի դեպ, սեպտեմբերին Վանաձորում կայացած ադամյանցիների հյուրախաղային ծրագրին աջակցել էր և Գուգարաց թեմը՝ հանձին առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի:

Վանաձոր վերադարձի ճանապարհին հյուրերն այցելեցին պատմական Մցխեթ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ